ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

«ԵՕՀՊՄՔ-ԳՀԱՊՁԲ-17/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի
(Հայտերի գնահատման արդյունքների հաստատման)

ք. Երևան, Արամ Մանուկյան 31
27.12.2017թ.

Ժամը՝ 10.00-ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Թովմասյան

Անդամներ՝ Ս. Սարգսյան

Կ. Ղազարյանը

Հանձնաժողովի քարտուղար՝ Ս. Գագինյան

«Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՕՀՊՄՔ-ԳՀԱՊՁԲ-17/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը տեղի ունեցավ «Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչական շենքում, ք. Երևան, Արամ Մանուկյան 31 հասցեում, 2017 թվականի դեկտեմբերի 27-ին ժամը 10.00-ին:

23.12.2017թ.-ին Առաջին տեղ զբաղեցնող մասնակիցներ «ՀԱԴՐՈՒԹ-1» ՍՊԸ-ի, «ՖՈՏՈՆ» ՍՊԸ-ի, «ԳԱՐԴՄԵՆ» ՍՊԸ-ի, «Դեագա» ՍՊԸ-ի, «Սասնա Ճրագ» ՍՊԸ-ի և «Նոր Ֆուդ» ՍՊԸ-ի վերաբերյալ ՀՀ ԿԱ ՊԵԿ ՏՏ աշխատակցի կողմից տրվել է հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների բացակայության մասին եզրակացություն, ինչպես նաև «ԵՕՀՊՄՔ-ԳՀԱՊՁԲ-17/02» ծածկագրով գնանշման հարցման հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար բավարար տեղեկատվություն:

Սահմանված ժամկետում առաջին տեղն զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացվել են մասնակցի որակավորման պահանջները հաստատող փաստաթղթերը, ինչպես նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանն, արտադրողի անվանումը,

ծագման երկիրը, ապրանքի տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագրերը):

26.12.2017թ. հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրվել է առաջին տեղն զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված տվյալ մասնակցի որակավորման պահանջները հաստատող փաստաթղթերը, ինչպես նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանն, արտադրողի անվանումը, ծագման երկիրը, ապրանքի տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագրերը), գնահատման թերթիկների երկուական օրինակ և ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից ստացված տեղեկատվությունը:

Հիմք ընդունելով «ԵՕՀՊՄՔ-ԳՀԱՊՁԲ-17/02» ծածկագրով գնանշման հարցման հրավերի 1-ին մասի 8.19, 8.22 կետերը, գնահատման թերթիկները՝ Հանձնաժողովը 3 կողմ, 0 դեմ ձայնով, ***միաձայն որոշեց***՝

Ա. Ընտրված մասնակից ճանաչել՝

- «ՀԱԴՐՈՒԹ-1» ՍՊԸ-ին N 1 չափաբաժնով.
- «ՖՈՏՈՆ» ՍՊԸ-ին NN 2,7,10,14 չափաբաժիններով
- «ԳԱՐԴՄԵՆ» ՍՊԸ-ին NN 3,4,6,17 չափաբաժիններով
- «Դեագա» ՍՊԸ-ին NN 5,13 չափաբաժիններով
- «Սասնա Ճրագ» ՍՊԸ-ին՝ NN 8,9,11,12,15,16 չափաբաժիններով
- «Նոր Ֆուդ» ՍՊԸ-ին N 18 չափաբաժնով:

Բ. Հաստատել «ԵՕՀՊՄՔ-ԳՀԱՊՁԲ-17/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի **պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության** տեքստը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն հրապարակել:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ *Վարդան Թովմասյան*

Անդամներ՝ _____ *Սամվել Սարգսյան*

_____ *Կարինե Ղազարյան*

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ *Սահակ Գագինյան*